# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՆԳՆ ՈԿՀ-2023 ԲՄԿ

ք. Երևան

« 15 » ----02---- 2023թ.

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի, ոստիկանության գեներալ-մայոր Ա.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.04.01.01..«Բարձրագույն մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակներում «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջին տարեկան թվով 170 սովորողի համար հաշվարկված, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

## 2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. . Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 922376700 (ինը հարյուր քսան երկու միլիոն երեք հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածին համապատասխան:

## 3.ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

## 4.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| ՀՀ ՆԳՆ ոստիկանություն | «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՎՀՀ 01533334 | ՀՎՀՀ 01806293 |
| Հ/Հ 900011159051 | Հ/Հ 900018005018 |
| ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ | Պետ |
| գեներալ-մայոր ---------- Ա.Հովհաննիսյան | գնդապետ ---------- Մ.Մուրադյան |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1

«15» 02 2023 թ. կնքված

N ՀՀ ՆԳՆ ՈԿՀ-2023 ԲՄԿ պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ հազ.դրամ/

| NN | Ծառայության անվանումը | Ֆինանսավորումը 2023թ. ընթացքում՝ ՀՀ 2023թ. պետական բյուջեից /աճողական կարգով/ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | ոստիկանության ծառայողների բարձրագույն մասնագիտական կրթություն | 76864.7 | 153729.5 | 230594.2 | 307458.9 | 384323.7 | 461188.4 | 538053.1 | 614917.9 | 691782.6 | 768647.3 | 845512.0 | 922376.7 | 922376.7 |

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

ՀՀ ՆԳՆ ոստիկանություն

ք. Երևան, Նալբանդյան 130

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01533334

Հ/Հ 900011159051

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ՝

գեներալ-մայոր ---------- Ա.Հովհաննիսյան

Կ.Տ

**Կ ա տ ա ր ո ղ**

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ

ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01806293

Հ/Հ 900018005018

Պետ՝

գնդապետ ---------- Մ.Մուրադյան

Կ.Տ